

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

**« 29 » հոկտեմբեր 2013թ. նիստում**

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

### **«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

#### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1. «Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Ինստիտուտ) Լեզուների ուսուցման կենտրոնը (այսուհետև՝ ԼԿ) Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է:
- 1.2. ԼԿ գործունեության նպատակն է՝ նպաստել մասնագիտական կրթության համակարգի զարգացմանը, անձի կրթական և մասնագիտական մակարդակի ու որակի բարձրացմանը, նպաստել զբաղվածության աճին՝ համաձայն աշխատաշուկայի պահանջներին:
- 1.3. Իր գործունեության ընթացքում ԼԿ-ն առաջնորդվում է ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներով, Ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
- 1.4. ԼԿ-ն չի ենթադրում շահույթի հետապնդում և ԼԿ-ի ֆինանսական ծախսերն ամբողջությամբ հոգում է Ինստիտուտը:
- 1.5. ԼԿ-ի ուսուցումն իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչներով սահմանված հիմնական կրթական ծրագրերի շրջանակներից դուրս: Դասավանդումը ԼԿ-ում իրականացվում է անվճար և վճարովի սկզբունքներով՝

համաձայն Ինստիտուտի և ունկնդրի միջև կնքված պայմանագրի: Դասընթացի տևողությունը պայմանավորված է ամբիոնի կողմից հաստատված ուսումնական ծրագրերի համար նախատեսված տևողությամբ: Անհրաժեշտության դեպքում ԼԿ-ում կարող են կազմակերպվել արագացված դասընթացներ:

## **2. ԼԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

- 2.1. ԼԿ-ի հիմնական գործառույթներն են.
  - 2.1.1. խթանել կրթական և գիտական համակարգի զարգացումը,
  - 2.1.2. բավարարել անձի պահանջները սոցիալ-մշակութային բնագավառում, նպաստել գիտելիքների և փորձի ձեռքբերմանը,
  - 2.1.3. ամբիոնների աջակցությամբ մշակել նոր ծրագրեր և դասավանդման մեթոդներ,
  - 2.1.4. նպաստել «հարատև կրթության» համակարգի կայացմանը և ընդլայնմանը,
  - 2.1.5. կազմակերպել լրացուցիչ կրթություն պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական աշխատակազմի և ուսանողների համար՝ զարգացնելով և ամրապնդելով սովորողների լեզվական գիտելիքները և հմտությունները:

## **3. ԼԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

- 3.1. ԼԿ գործունեության առարկան է՝ եվրոպական լեզուների (հատկապես անգլերենի) և ռուսերենի դասավանդումը՝ «Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգ»-ի պահանջներն ապահովելու նպատակով:
- 3.2. ԼԿ գործունեության նպատակներն են.
  - 3.2.1. նպաստել լեզուների ուսուցման բնագավառում կրթության որակի բարելավմանը,
  - 3.2.2. նպաստել անձի լեզվական գիտելիքների ձևավորմանը և ամրապնդմանը,
  - 3.2.3. նպաստել սովորողների կրթական մակարդակի բարձրացմանը՝ խոսակցական և գրավոր օտար լեզվի բնագավառում որակյալ գիտելիքների մատուցման միջոցով,
  - 3.2.4. նպաստել Ինստիտուտի ներքին շահակիցների լեզվաիմացության մակարդակի բարձրացմանը՝ Ինստիտուտի արտաքին կապերի և միջազգայնացման արդյունավետությունը խթանելու համար:

## **4. ԼԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

- 4.1. ԼԿ ուսուցումը կազմակերպվում է առկա հիմունքներով:

- 4.2. ԼԿ ուսումնական ծրագիրը մշակվում է Կենտրոնի մասնագետների կողմից, քննարկվում և հաստատվում է Ինստիտուտի համապատասխան ամբիոնների կողմից:
- 4.3. Դասընթացների անցկացման ժամանակացույցը և լսարանային ֆոնդի ապահովումը համաձայնեցվում է ԳՊՄԻ-ի ուսումնամեթոդական վարչության հետ և հաստատվում համապատասխան պրոռեկտորի կողմից:
- 4.4. ԼԿ-ի դասընթացները կազմակերպվում են խմբային սկզբունքով:
- 4.5. ԼԿ-ում սովորողների խմբերը ձևավորվում են՝ հաշվի առնելով նրանց համապատասխան լեզվի իմացության մակարդակը:
- 4.6. ԼԿ-ի դասընթացների մասին տրվում է հայտարարություն բուհի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից:
- 4.7. Սահմանված ժամկետում ունկնդիրը տվյալ ամբիոնի կամ համապատասխան ստորաբաժանման համաձայնությամբ գրավոր դիմում է ներկայացնում ԼԿ-ի դասընթացներին մասնակցելու խնդրանքով:
- 4.8. Դիմումի առկայությամբ ԼԿ մասնագետի զեկուցագրի հիման վրա ունկնդիրը ռեկտորի հրամանով կցագրվում է դասընթացներին:
- 4.9. Ունկնդրի և ռեկտորի միջև կնքվում է պայմանագիր ամբողջ դասընթացի համար:
- 4.10. Ունկնդիրը կարող է ազատվել դասընթացից իր դիմումի համաձայն:
- 4.11. ԼԿ-ում դասընթացներն ավարտած անձանց տրվում է համապատասխան վկայական:
- 4.12. Վկայականի հանձնումով դադարում են Ինստիտուտի և ունկնդրի միջև պայմանագրային հարաբերությունները:

## **5. ԼԿ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

- 5.1. ԼԿ-ն համակարգում է հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչը:
- 5.2. ԼԿ-ի դասավանդող կազմը նշանակվում է Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի անդամներից, կամ հրավիրվում է այլ կազմակերպություններից՝ համաձայն ռեկտորի հրամանի: Նրանց հետ կնքվում է պայմանագիր:

## **6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ**

- 6.1. ԼԿ-ում կազմակերպվող դասընթացները վճարովի են, որոնց չափերը սահմանվում են պայմանագրում:
- 7. ԼԿ աշխատակիցների իրավունքները և պարտականությունները
- 7.1. Պրոֆեսորադասախոսական կազմը դասընթացների անցկացմանը մասնակցում է կամավոր հիմունքներով:

- 7.1.1. ԼԿ-ում դասավանդողների կազմը ձևավորվում է Բնաստիտուտի ռեկտորի հրամանով:
- 7.1.2. ԼԿ-ում դասավանդող մասնագետները վարձատրվում են ժամավճարային հիմունքներով՝ ըստ բուհում գործող կարգի:
- 7.2. ԼԿ-ում դասավանդող անձն իրավունք ունի.
  - 7.2.1. մշակել և ներկայացնել առաջարկություններ՝ կրթական ծառայությունների տրամադրման ձևերի և մեթոդների կատարելագործման ուղղությամբ,
  - 7.2.2. ընտրել կրթական ծառայությունների տրամադրման նպատակներին և խնդիրներին համապատասխանող ուսուցման մեթոդներ և ձևեր:
- 7.3. ԼԿ-ում դասավանդող անձը պարտավոր է.
  - 7.3.1. լրիվ ծավալով կատարել դասընթացների ծրագրով նախատեսված ուսումնական աշխատանքները,
  - 7.3.2. մինչև ուսումնական գործընթացի սկիզբը համապատասխան ամբիոնի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական նկարագիրը, ծրագիրը և օրացուցային պլանը,
  - 7.3.3. Լկ-ի մասնագետին յուրաքանչյուր ամիս ներկայացնել տեղեկություններ՝ կրթական ծառայությունների կատարման մասին,
  - 7.3.4. Պահպանել սույն կանոնակարգի պահանջները:

**8. ԼԿ-ՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 8.1. ԼԿ ունկնդիրների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության և Բնաստիտուտի հետ կնքած պայմանագրի:
- 8.2. Դիմորդներն իրավունք ունեն նախապես ծանոթանալու տվյալ դասընթացների համար առաջարկված պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ և առաջարկել իրենց կողմից հավանության արժանացած թեկնածուներին՝ տվյալ ծրագրով դասընթացներ անցկացնելու համար:
- 8.3. Լկ-ում սովորող ունկնդիրն իրավունք ունի.
  - 8.3.1. ստանալ Բնաստիտուտի ԼԿ-ի ծրագրով նախատեսված դասընթացին համապատասխանող կրթական ծառայություններ,
  - 8.3.2. օգտվել Բնաստիտուտի կրթական ռեսուրսներից (գրադարան, ընթերցասրահ, լաբորատորիաներ, կաբինետներ և այլն):
- 8.4. ԼԿ-ում սովորող անձը պարտավոր է.
  - 8.4.1. պարտաճանաչ հաճախել դասընթացներին,

- 8.4.2. կատարել սույն կանոնակարգի պահանջները,
- 8.4.3. կատարել պայմանագրային այլ պարտականությունները,
- 8.4.4. ենթակրվել ինստիտուտի ներքին կարգապահական կանոններին:

8.5. Ունկնդիրը հեռացվում դասընթացից կանոնակարգի 8.4.1.-րդ, 8.4.2.-րդ, 8.4.3.-րդ, 8.4.4.-րդ կետերը խախտելու դեպքում:

## **9. ԼԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ և ՍՈՎՈՐՈՂ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

9.1. ԼԿ-ի աշխատողները և սովորող ունկնդիրները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: